

ԽՐԱՏ ԲՈՒՈՐ

ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒՆ

Արդարեւ, բազմաթիւ քանակներ պարտական եմ Տիրոջս՝ ամենատառ պարգեւատուին ու բարեբարին, որովհետեւ Իր խօսքի սուրբ արծաթով լուսաւոր ու մաքուր վարդապետութիւնը եւ աւետարանական քարոզութիւնը, գործնականիս տուաւ, ո՛չ սեղանաւորներուն մօտ ձգեցի, ո՛չ քարոզեցի քրիստոնեաներուն լսելի դարձնելու համար, եւ ո՛չ ալ սերմանեցի լսողներու հոգիներուն ու միտքներուն մէջ, հետեւաբար, չբազմացուցի եւ ոչինչ շահեցայ: Աստուածային իր այգիի տունկերուն պէս հոգացող ու պահապան հրաւիրուեցայ, մշակի վարձքս լիովին ստացայ, սակայն երկնաւոր տունկերն ու բանաւոր բոյսերը՝ քրիստոնեաները, ծառայաբար մշակելու համար երբեք չաշխատեցայ:

Իսկ ի՞նչ էր աշխատանքը.– շրջիլ, քարոզել, խրատել, բարեգործութեան պտուղներուն վնասակար չարիքներն ու սովորական մեղքերը յօտել, կտրել, վարդապետութեան ջուրով ոռոգել, շուրջի հողը փորել ու կակուղցնել, եւ այս բոլորը գործադրողներու օրինակէն պէտք էր պատկանէի ու սորվէի, նման անոր, որ թգեմիին համար տիրոջ աղաչեց. «Մի՛ կտրէր, մի՛նչեւ որ ասոր շուրջ փորես եւ աղբով պարարտացնես, թերեւ պտուղ բերէ (Ղուկ. 13.8), նաեւ պէտք էր զգաստանայի աստուածային Պօղոսին ձայնէն, որ կ'ըսէ. «Ես տնկեցի, Պօղոս ջուր տուաւ եւ Աստուած անեցուց» (Կորնթ. 3.6)...

Շարունակելի

ՍՔԵՄ

Ծիսակատարութեան զգեստը գանգ ընելով, եկեղեցականներու գործածած զգեստը կը կոչուի սքեմ:

Սքեմին մաս կը կազմեն պարեգօտը, վերարկուն, վեղարը, փակեղն ու փիլոնը:

Պարեգօտներու պարագային անցեալին կուսակրօններուն եւ վանականներուն վերապահուած էր սեւ գոյնը, իսկ ամուսնացեալ քահանաներ, գանազան գոց գոյներով պարեգօտներ կը հագնէին:

Իսկ այսօր ճիշդ հակառակն է: Սեւ գոյնը վերապահուած է քահանաներուն եւ գունաւոր պարեգօտները՝ վարդապետներուն եւ եպիսկոպոսներուն:

Ս. Էջմիածնի եւ Նրուսադեմի միաբանները ընդհանրապէս բաց մոխրագոյն կամ բաց մեղրագոյն պարեգօտներ կը հագուին, իսկ Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանները որդեգրած են գոց կապոյտ գոյնը:

Եպիսկոպոսներուն վերարկուին կոնակը մանիշակագոյն կ'ըլլայ:

ՆՈՐՈՒԹԻՒՆ ՃՐԱԳԵՆ

Յառաջիկայ տարուան թիւին մէջ նորութիւններ պիտի ըլլան եւ նիւթերու փոփոխութիւն: Ծիսական բաժինին մէջ Ս. Պատարագի բացատրութիւն պիտի փոխանցուի, իսկ հարցում պատասխան բաժինը պիտի յատկացուի ընթերցողներու մեզի ուղղած հարցումներուն պատասխաններուն: Հետեւեցէք մեզի:



ԲՈՒ ԽՕՍԲԵՐ ԽՄ ՈՅԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺՁ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 10 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023 ԹԻՒ 50

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԵԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես. 37.14-38: Բ. Թս. 1.1-12 : Ղկ. 14.12-24

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ 14. 12-24

Ապա Յիսուս տանտիրոջ ըսաւ. «Երբ ճաշի կամ ընթրիքի հրաւեր կու տաս, մի՛ կանչեր բարեկամներդ կամ եղբայրներդ, որպէսզի չըլլայ՝ որ անոնք ալ քու հրաւերիդ փոխարէն քեզ հրաւիրեն, եւ այս ձեւով քեզի հատուցում կատարած ըլլան: Ընդհակառակը, երբ ընդունելութիւն կը սարքես, կանչէ՛ աղքատներն ու խեղանդամները, կաղերն ու կոյրերը եւ այն ատեն երանելի պիտի ըլլաս, որովհետեւ անոնք քեզի փոխարէնը հատուցանելիք ոչինչ ունին: Եւ գիտցած եղիր, որ քու հատուցումդ պիտի ստանաս արդարներու յարութեան ժամանակ»:

Երբ սեղանակիցներէն մէկը այս խօսքերը լսեց, ըսաւ Յիսուսի. «Երանի՛ անոր, որ Աստուծոյ արքայութեան մէջ ճաշ պիտի ուտէ»:

Յիսուս անոնց հետեւեալ առակը պատմեց.- Մարդ մը կար, որ մեծ ընթրիք մը սարքեց եւ շատեր հրաւիրեց: Ընթրիքի ժամուն իր ծառան դրկեց, որպէսզի հրաւիրեալներուն ըսէ. «Եկէ՛ք, ամէն ինչ պատրաստ է»: Հրաւիրեալները սկսան մէկ առ մէկ հրաժարիլ: Առաջինը ըսաւ. «Ազարակ գնեցի, պէտք է երթամ եւ տեսնեմ գայն, հետեւաբար կը խնդրեմ՝ որ ներողամիտ գտնուի»: Միւսը ըսաւ. «Հինգ գոյգ եզ գնեցի, պէտք է երթամ փորձեմ զանոնք, հետեւաբար կը խնդրեմ՝ որ ներողամիտ գտնուի»: Ուրիշ մը ըսաւ. «Տակաւին նոր ամուսնացայ, հետեւաբար չեմ կրնար գալ»: Ծառան վերադարձաւ եւ իր տիրոջ պատմեց անոնց ըսածները: Այն ատեն տանտէրը վրդոված՝ ըսաւ ծառային. «Անմիջապէս քաղաք գնա՛ եւ հրապարակներուն ու փողոցներուն մէջ, որքան որ աղքատ, խեղանդամ, կաղ եւ կոյր տեսնես, բոլորն ալ հոս բեր՛»: Քիչ ետք ծառան վերադառնալով իր տիրոջ ըսաւ. «Տէ՛ր, հրամանդ կատարեցի, բայց տակաւին տեղ կայ»: Տէրը ծառային հրամայեց. «Քաղաքէն դուրս գնա՛ եւ ճամբաներուն վրայ ու դաշտերուն մէջ, որո՞ւ որ գտնես, ստիպէ՛ որ գայ, որպէսզի տունս լեցուի: Կ'ըսես՝ ձեզի, որ առաջին հրաւիրեալներէն ո՛չ մէկը ինծի հետ ընթրիքի պիտի նստի»:

# ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

## ՍՐԲՈՅՆ՝ՄԻՆԱՍԱՅ, ԵՐՍՈԳԻՆԵԱՅ, ԵՒԳՐԱՓՈՍԻ ԵՒ ԿԱՍԱԽՈՐ ԱՂՔԱՏԱՏՆ՝ՅՈՎԿԱՆՆՈՒ ԵՒ ԱԼԵՔՍԻԱՆՈՍԻ

### Մինաս, Երմոգինես եւ Եւգրասիոս վկաներ

4-րդ դարուն, Մաքսիմիանոս կայսր, իր իշխանութեան տակ գտնուող խոռվա-յոյգ Ադեֆսանդրիա քաղաքը խաղաղեցրեցիւ համար կը դրկէ Մինաս անունով մարտասան եւ իմաստուն մարդ մը, որ իր առաքելութեան մէջ յաջողելով, կառավարիչ կը նշանակուի կայսրին կողմէ: Ան իր հետ Ադեֆսանդրիա կը տանի նոյնպէս իմաստուն իր քաղաքը՝ Եւգրասիոս անունով:

Մինաս գաղտնաբար քրիստոնեայ հաւատացեալ մըն էր, սակայն իր ցուցաբերած բարեկամութիւնն ու օգնութիւնը հանդէպ քրիստոնեաներուն, առիթ կը հանդիսանան որպէսզի Ադեֆսանդրիոյ մեծանուն հեթանոսները բացայայտեն անոր քրիստոնէութիւնը եւ կայսրին դիմելով գահընկեց ընեն զինք:

Կայսրը Մինասին տեղ Ադեֆսանդրիոյ կառավարիչ կը նշանակէ Երմոգինես անունով նոյնպէս Աթենացի, իմաստուն եւ մարտար մարդ մը, որ փոխարինելով Մինասը, յաճախ կը փորձէր ուրացութեան հրաւիրել նախկին կառավարիչը ու հեթանոսութեան դարձնել զայն: Ան նոյնիսկ կտրել կու տայ Մինասին լեզուն եւ աչքերը փորելով բանտ կը նետէ զայն: Սակայն երբ յաջորդ օրը Մինաս հրաշքով բժշկուած դուրս կու գայ բանտէն, Երմոգինես կը զղջայ եւ ինք եւս դարձի կու գայ ու քրիստոնեայ կը մկրտուի: Այս լսելով կայսրը դատի կը կանչէ երկուքը, որոնց հետ նաեւ Եւգրասիոս քաղաքը:

Երբքն այ չարչարաններու կ'ենթարկուին եւ քաղաքը կը տոկան, պաշտպանելով իրենց հաւատքը: Ապա կայսրը չհանդուրժելով Եւգրասիոսի անարգանքը, որ համարձակ կը խայտառակէր զինք իրենց ամուր հաւատքէն հրաժարեցնել չկարենալուն համար, նախ կը սպաննէ քաղաքը եւ ապա կը գլխատէ Մինաս ու Երմոգինես վկաները, որոնք նահատակուելով Քրիստոսի անունին համար, արժանի կը դառնան Աստուծոյ Արքայութիւնը ժառանգելու:

### Յովհաննէս կամաւոր աղֆատ

Յովհաննէս նգնաւորի կեանքին մասին երկու տարբերակներ կը ներկայացրնեն վարժագիրները՝ Արեւելեան եւ Արեւմտեան: Ան տօնացոյցին անցած է երկու տարբեր անուններով, թէ որպէս Գրեցի եւ թէ որպէս Կամաւոր Աղֆատ:

Ըստ Արեւելեանին, եղած է Կեսարացի այրի մօր մը միակ զաւակը, ծագումով հայ կամ ասորի: Փոքր տարիքէն կը հեռանայ տունէն եւ ցամբած հորի մը մէջ մտնելով այնտեղ կը նգնի շուրջ տասը տարիներ, յաղթահարելով բոլոր տեսակի դժուարութիւնները: Այդ իսկ պատճառով, Յովհաննէս Արեւելեան տօնացոյցերուն մէջ նանչուած է Գրեցի մակդիրով:

Իսկ ըստ Արեւմտեանին, եղած է Կ. Պոլսեցի եւ ապրած է 5-րդ դարու երկրորդ քառորդին: Կանուխ տարիքին գաղտնաբար կը հեռանայ տունէն եւ կը նգնի անապատի մը մէջ, ուր սակայն չգիմանալով ծնողի կարօտին, 6 տարիներ ետք կը վերադառնայ իր ծննդավայրը, բայց առանց ինքզինք յայտնելու ծնողին, իրենց տան մօտիկ բնակարանի մը մէջ կը նգնի 8 տարիներ: Մահուան սնարին մէջ ինքզինք կը յայտնէ ծնողին ցոյց տալով անոնցմէ ժառանգ մնացած Աստուածաշունչը: Այսպիսով կը վախճանի Ս. Յովհաննէս, առնելով «Խրեթաբնակ» մակդիրը Արեւմտեան եկեղեցիներու մէջ:

# Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

## ՔՐԻՍՏՈՍԻ ՏՈՒՂՑ ԵՐԿՈՐ ԿԵՆՏՐԵՐԸ

«Ես եկայ՝ որպէսզի կեանք ունենան, եւ լեցուն կեանք ունենան» (Յհ. 10.10): Այստեղ Յիսուս երկու անգամ կը գործածէ «կեանք» բառը: Կարգ մը մեկնիչներ, ինչպէս օրինակ, Սուրբ Օգոստինոս, Սուրբ Յովհան Ոսկեբերան, եւ ուրիշներ, կ'ըսեն, թէ առաջին «կեանք»-ը որուն մասին կը խօսի Յիսուս ներկայ կեանքն է, հարկաւ նորոգուած, քառուած եւ Սուրբ Հոգիով առաջնորդուող կեանքը, իսկ երկրորդ «կեանք»-ը՝ մահէն ետք գտնուող դրախտի կեանքն է, եւ կամ՝ Տիրոջ երկրորդ գալուստէն ետք գալիք՝ արքայութեան կեանքն է: Այս իմաստով, երբ Յիսուս կ'ըսէ. «Ես եկայ՝ որպէսզի կեանք ունենան», ըսել կ'ուզէ թէ ան եկաւ մեր ներկայ կեանքը փոխելու եւ մեղքէն ու չարէն ազատագրուած նոր կեանք տալու մեզի, իսկ երբ կ'ըսէ. «Եւ լեցուն կեանք ունենան», կ'ակնարկէ մահէն ետք եկող դրախտային (Աստուծոյ ներկայութեամբ յատկանշուած) կեանքին, ինչպէս նաեւ յաւիտենական կեանքին, որ Արքային գալուստէն ետք պիտի սկսի:

## ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Ս Ը

Քրիստոսով առաջին կեանքը չունեցողը՝ պիտի զրկուի նաեւ երկրորդ կեանքէն:

# ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

## ԵԹԷ Կ՛ՈՒԶԵՍ ԳԻՏԱԿ, ԹԷ ԻՆՉՊԻՍԻ ԹՎՊՎՈՐ ՄԸՆ Է ԱՍՏՈՒՂՑ, Կարդա՛ ՍԱՂՄՈՍ 47

Ծափ զարկէք, ժողովուրդներ բուռ, աղաղակեցէ՛ք եւ ցնծութեան երգ երգեցէ՛ք Աստուծոյ, որովհետեւ Տէրը, Բարձեալը ահարկու է, ամբողջ աշխարհին տիրող մեծ թագաւորն է անիկա: Անիկա ժողովուրդները մեզի հնազանդեցուց, ազգերը մեզի ենթարկեցուց: Ինք ընտրեց իբրեւ ժառանգութիւն մեզի տրուած երկրին, իր սիրելի ժողովուրդին պարծանք:

Ահա Աստուած վեր կը բարձրանայ՝ ցնծութեան աղաղակներու ընկերակցութեամբ, մեր Տէրը ինք վեր կը բարձրանայ՝ փողերու կանչերուն հետ: Ներքո՛ղ երգեցէ՛ք Աստուծոյ, ներքո՛ղ երգեցէ՛ք. ներքո՛ղ երգեցէ՛ք մեր Թագաւորին, ներքո՛ղ երգեցէ՛ք, որովհետեւ Աստուած ինքն է ամբողջ աշխարհին տիրող մեծ Թագաւորը. իմաստութեան երգով ներքո՛ղ երգեցէ՛ք: Աստուած ազգերուն վրայ կը թագաւորէ՝ իր սուրբ աթոռին բազմած: Ժողովուրդներու իշխանները Աբրահամին Աստուծոյն շուրջ կը խմբուին, որովհետեւ Աստուած ինքն է, որ կը տիրէ այս աշխարհին տիրողներուն:

## ԿԱՏԱՆԷ՛ ՏԻՐՈՋ

Տիրոջ վստահէ, անոր կամքին հնազանդէ, եւ անիկա քեզ պիտի բարձրացնէ՝ քեզի ժառանգութիւն տալով երկիրը, եւ պիտի տեսնես ամբարիշտները հոնկէ վտարուած: (Սաղմոս 37.34)